Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Այգաբացի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Անգլերեն» (5 դասաժամ), «Մաթեմատիկա» (6 դասաժամ), «Պատմություն» (11 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար:Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ սեպտեմբերի 04-ից մինչև 2023թ սեպտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենան 2023թ. սեպտեմբերի 19-ին ժամը 14-00-ին ՀՀ Շիրակի մարզի Այգաբացի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Ախուրյան համայնք գ. Այգաբաց, փ8 շ16:

Տեղեկությունների համար զանգահարել 098185212 հեռախոսահամարով: